ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչության պետ Քրիստինե Գաբուզյանի և նույն վարչության մոնիթորինգի բաժնի պետ Հասմիկ Տիգրանյանի Ավստրիայի Հանրապետություն (Վիեննա) գործուղման արդյունքների վերաբերյալ

Գործուղված պաշտոնատար անձինք. Քրիստինե Գաբուզյան և Հասմիկ Տիգրանյան:

Գործուղված անձանց զբաղեցրած պաշտոնները. ՀՀ արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչության պետ և նույն վարչության մոնիթորինգի բաժնի պետ

Գործուղման վայրը և ժամկետները. Ավստրիայի Հանրապետություն (Վիեննա), 2022 թվականի նոյեմբերի 5-ից նույն թվականի նոյեմբերի 11-ը:

Հրավիրող կողմը՝ ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակ (UNODC, այսուհետ՝ ՄԱԿ Գրասենյակ):

Գործուղման նպատակը. մասնակցություն ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի (այսուհետ նաև՝ Կոնվենցիա) մարմինների՝ «Կոնվենցիայի կիրարկման վերանայման» աշխատանքային խմբի, «Ակտիվների վերադարձի» և «Միջազգային համագործակցության» աշխատանքային խմբերի նիստերին, ինչպես նաև մասնցակցություն Կոնվենցիայի վերանայման մեխանիզմի ազգային համակարգողների և 2022 թվականի դրությամբ Կոնվենցիայի համապատասխանությունը գնահատող կառավարական փորձագետների վերապատրաստմանը:

Քննարկված թեմաները. Կոնվենցիայի կիրարկմանը, ապօրինի ծագում ունեցող գույքի, ինչպես նաև կոռուպցիոն հանցագործությունների արդյունքում ստացված եկամուտի վերադարձին, այդ նպատակով միջազգային համագործակցության ամրապնդմանը, ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի՝ կոռուպցիայի

դեմ պայքարի քաղաքական հռչակագրի (UNGASS political declaration 2021 on fight against corruption) կիրարկմանը, այդ առնչությամբ օրենսդրական փոփոխությունների և իրավակիրառ փորձին, Կոնվենցիայի գնահատման մեթոդաբանությանն առնչվող հարցեր, ինչպես նաև Բուլղարիայի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության կողմից Կոնվենցիան պարտավորությունների գնահատումներին առնչվող հարցեր:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Քրիստինե Գաբուզյանը և Հասմիկ Տիգրանյանը մասնակցել են ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի (այսուհետ նաև՝ Կոնվենցիա) մարմինների՝ Կոնվենցիայի անդամ երկրների կոնֆերանսի Կիրարկման վերանայման աշխատանքային խմբի նիստերին, որի ընթացքում մասնակցել են Կոնվենցիայի անդամ պետությունների կողմից Կոնվենցիան պարտավորությունների կատարման վերաբերյալ քննարկմանը: Քրիստինե Գաբուզյանը ներկայացրել է նաև Հայաստանի Հանրապետության կողմից Կոնվենցիայի գնահատման երկրորդ փուլի գործառնական եզրակացություններով տրված հանձնարականների կատարման ուղղությամբ իրականացված բարեփոխումները: Նշված աշխատանքային նիստի ընթացում քննարկվել են Գնահատման երկորդ փուլի մեթոդական հետագա վերանայմանը, դրա շրջանակի փոփոխման վերաբերյալ Կոնվենցիայի անդամ մի շարք պետությունների կողմից ներկայացված առաջարկությունների նպատակահարմարությանն առնչվող հարցեր: Քրիստինե Գաբուզյանը և Հասմիկ Տիգրանյանը հանդիպումներ են ունեցել նաև Հայաստանի Հանրապետության կողմից Կոնվենցիայի կատարման գնահատումն իրականացնող փորձագետների հետ, քննարկվել են Հայաստանի Հանրապետության վերաբերյալ զեկույցի նախագծին, ինչպե նաև Հայաստանի Հանրապետության գանահատումն ավարտելուն առնչվող հարցեր:

Քրիստինե Գաբուզյանը և Հասմիկ Տիգրանյանը մասնակցել են նաև «Ակտիվների վերադարձի» և «Միջազգային համագործակցության» աշխատանքային խմբերի նիստերին, որի ընթացքում քննարկումներ են տեղի ունեցել ապօրինի ծագում ունեցող գույքի վերադարձի, ինչպես նաև կոռուպցիոն հանցագործության արդյունքում ստացված եկամուտի վերադարձի, դրանց առնչությամբ միջազգային

համագործակցության արդյունավետ իրականացմանն առնչվող հարցերի վերաբերյալ, ներկայացվել են այդ հարցերի վերաբերյալ ՄԱԿ-ի գրասենյակի կողմից իրականացված ուսումնասիրության արդյունքները: Միևնույն ժամանակ քննարկվել են հակակոռուպցիոն քաղաքականության շրջանակում միջազգային համագործակցությանը և փոխօգնությանն առնչվող հարցեր:

Քրիստինե Գաբուզյանը և Հասմիկ Տիգրանյանը մասնակցել են նաև «Կոնվենցիայի անդամ երկրների կոնֆերանսի Կիրարկման» աշխատանքային խմբի, «Ակտիվների վերադարձի» և «Միջազգային համագործակցության» աշխատանքային խմբերի համատեղ նիստին, որի շրջանակում Հասմիկ Տիգրանյանը ներկայացրել է ՄԱԿ-ի գլխավոր անսամբլեայի՝ կոռուպցիայի դեմ պայքարի քաղաքական հռչակագրի կիրարկման նպատակով Հայաստանի Հանրապետության կողմից իրականացվող բարեփոխումները: Համատեղ նիստի ընթացքում քննարկվել է նշված հռչակագրի իրականացումն առավել արդյունավետ դարձնելու, առկա այլ միջազգային պարտավորությունների գնահատումների հետ հնարավորին կրկնությունները բացառելուն ուղղված աշխատանքների իրականացմանն առնչվող հարցեր:

Վերապատրաստման ընթացքում Քրիստինե Գաբուզյանը և Հասմիկ Տիգրանյանը մասնակցել են Գնահատման երկրորդ փուլի ընթացքում վերանայման ենթակա դրույթների իրականացման վերաբերյալ շնորհանդեսների ներկայացմանը, գնահատման փոփոխված մեթեոդաբանության բացատրական դասընթացին, ինչպես նաև ինտերակտիվ քննարկումներին: Դասընթացի ընթացքում Քրիստինե Գաբուզյանը և Հասմիկ Տիգրանյանը ծանոթացել են ինքնագնահատման վերանայված ստուգաթերթին և Քարտուղարության կողմից պատրաստված ուղեցույցին (https://www.unodc.org/unodc/en/treaties/CAC/self-assessment.html): Ի լրումն վերոգրյալի՝ Քրիստինե Գաբուզյանը և Հասմիկ Տիգրանյանը գործնական դասընթացի ընթացքում իրականացրել են փորձնական գնահատում՝ հիմք ընդունելով փոփոխված մեթոդաբանությունը և ինքնագանահատման ստուգաթերթը:

Քրիստինե Գաբուզյանը և Հասմիկ Տիգրանյանը, որպես Բուլղարիայի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության կոնվենցիոն պարտավորությունները գնահատող կառավարական փորձագետներ, հանդիպել են

այդ պետությունների գնահատմանն օժանդակող ՄԱԿ-ի գրասենյաի փորձագետների հետ՝ վերջիններիս առաջարկությամբ: Հանդիպման շրջանակում քննարկվել են նշված պետությունների գնահատմանն առնչվող մասնագիտական հարցերը, ինչպես նաև գնահատման նպատակով նշված պետություններ առաջիկայում կայանալիք այցերին առնչվող կազմակերպչական հարցերը:

ՀՀ արդարադատության նախարարության
հակակոռուպցիոն քաղաքականության
մշակման և մոնիթորինգի վարչության պետ

Քրիստինե Գաբուզյան
15.11.2022թ.